

ՋԱՐԴՆ**(1895-1896)****Ա**

Հրամանը, օ՛ն: Զարոզին մէջ Պիլալի
 Կը ցըցէ Ռիսն ահա ցուլի եղջիւրներ.
 Մըզկիթներու բակերուն մէջ ժիրաժիր,
 Մահակներն ա՛լ կը յըղկըլին, կը հիւսուին
 Խարազանները թունաւոր օձերով.
 Եաթաղաններն հատու են.
 Եւ Ալիսի ու Ճորոխի, Եփրատի
 Ափունքներուն վրայ դահիճները կըկզած
 Կը յեսանեն կայծքարերով կացիներն.
 Հրամանը, օ՛ն: Ա՛լ բաւական է մեծցաւ
 Արծիւներու համբոյրով
 Թորգոմ վիշապն օրոցքին մէջ Մասիսի,
 Եւ բաւական է՝ որ իր վեհ գոռումով՝
 Սան-Ստեֆանի եւ Պեռլինի հողին վրայ՝
 Թըմրած սըրտերն համակրութեան խըթանեց,
 Եւ վերքերն իր կորիւններուն շըղթայուած
 Թըլեց թըլովն աստղերուն:
 Արդ կը տեսնէ՞ք ճիրաններն իր լուսաբուխ
 Որոնց խըրած տեղերն հերձ
 Կը ճեղքըլին արշալոյսներ, արեւներ.
 Նոճիներուն մէջ Վոսփորի կը լըսէ՞ք
 Սեւ մըղրկումները վիթխարի իր պոչին...
 Հրամանը, օ՛ն:
 Օր մը սեւ.
 (Այն օրն աստղերը ամբողջ թոյն կաթեցին.
 Եւ բուրեցին ոսկրի հոտ